բանաստեղծք, հնարագէտք, միանգամայն Յունաց և Հռոմայեցւոց մատենագիրները։ Լրդ 14 քաղաք կայ Ռէն անուամբ, 55 Ռէրրի, 21 Ռիթ, Ռիթսպերկ, Ռիթսֆիլտ, Ռիթսֆերտ, 42 Ռէյ, 30 Ռլինդրն, 15 Ռոլամպոս, 3 Ռաբբը, 1 Սամարդին, 21 Սֆայէթ, 6 Սուէլ, 18 Համիլդրն, 9 Հոմերոս, 17 Միլդրն, 3 Սբոլէոն, 3 Սէլբրն, 6 Պայրրն, 22 Պէնդրն, 6 Պոլիվար, 9 Պուն, 15 Պգոթ, 6 Պկիպիոն, 2 Պիրգիլիոս, 10 Ֆիլդրն, 6 Ֆոքս, 82 Ֆրանքլին։ Իսկ իրենց միաբանական կառավարութեան գահերեցները արժանապէս պատուեալ են այս կողմանէ ալ. 140 Ուոշինկդրն կը գրանուի, 26 Լատէմ, 71 Ն'էֆֆերսրն, 46 Մէտիզրն, 56 Մոնրոյ, 121 Ն'էքսրն, 28 Պան-Պիւրրն, 56 Հարրիսրն, 10 Ռոլք, 13 Սոքս, 12 Դայլեր, 1 Ֆիլմոր։

Նի Եօրքի Հերալտ կամ Պատգամաւոր լրագիրը։

Նիւ Եօրքի Հերալտ կամ Պատգամաւոր լրագիրը սկզբան չորս երեսով սկըսաւ տպուիլ. իսկ հիմա ութը երեսով կը հրատարակուի, ամենամանր և խիտ գրով. ասոր շարուելուն համար, հանդերձ իրեն արտաքոյ կարգի յաւելուածներովը, շաբաթը 2 միլիոն ու կէս գիր կը գործածուի. և իր տպարանին մէջ 12,500 լիպրա գիր կայ, որ ութը ամիսը մէյ մը կը նորոգուի։ ( )րը 70,000 և երբեմն ինչուան 85,000 օրինակ կը տպուի ու կը ծախուի. և վեց հրատարակումն ունի. Ա, առաւօտեան տպագրութիւնը (տարեկան գինը 7 տոլլար), որ ամէն օր կ'ելլէ՝ բաց 'ի յունուարի 2 և յուլիսի 3 օրերէն, որոնք ամերիկեան անկախութեան տարեդարձն են. Բ, կէսօրուընէ ետքը եղած տպագրութիւնը, որ է մէկուկէսին. Գ, երեկոյեան տպագրութիւնը, որ կը հրատարակուի ժամը իրեքին. Դ, շաբաթական տպագրութիւնը քաղքին ու գեղերուն համար (տարեկան գինը 3 տոլլար). Ե, Եւրոպայի համար եղած տպագրութիւնը (տար. գինը 4 տոլլ.), որ շաբաթը մէկ կամ երկու անգամ 'ի լոյս կ'ելլէ. Զ, Գալիֆոռնիոյ, Արտրալիոյ, Անտիլ կղզեաց և Խաղաղական ովկիանոսին ծովափնեայ սահմաններուն համար եղած տպագրութիւնը, որ ամէն ամսոյ 5ին ու 20ին կը հրատարակուի։ Այսոնց վրայ աւելցընելու է արտաքոյ կարգի յաւելուածները, որ ամէն մէկ շաբաթուան և կամ ո և է երևելի նորալրոյ մը հասնելուն դուրս կ'ելլեն, և ան ատեն գաղափար մը կը ընայ առնուիլ ամերիկեան տպագրութեան գործունէութեանը, որ ժողովրդեան անյագ հետաքրքրութիւնը կը ջանայ լեցընել։

Հերալտին համար շաբաթուան մը մէջ 12,250 պուրակ թուղթ կը գործածուի, որ է ըսել թէ թղթոյ գործարան մը հազիւ կրնայ այսչափ թուղթ հասցընել՝ թէ որ իրեն համար միայն աշխատելու ըլլայ։ Կարգաւ և ուղիղ գծով շարելու որ ըլլաս առաւօտեան միայն տպագրութիւնը, գրեթէ 50 անգլիական մղոն երկայնութիւն կ'ունենայ։ Իր տպարանին մէջ հարիւր հանապազորդեայ շարողներ կան, որ երկու դաս բաժնուած են, այսինքն ցորեկուան, և գիշերուան գործաւորներու։ Այսոնց ամէն մէկը 11 ժամ կ'աշխատի օրը, և իւրաքանչիւրին շաբաթէքն է 24-30 տոլլար։ Տպարանը իրեք մեքենայ ունի, զորոնք Հօ անուամբ գնդապետը հնարած է, և որոնց մէկը 6 ու երկուքը 10 գլանով են. ասոնք վայրկենի մը մէջ 40 անգամ դառնալով, 1040 օրինակ կը տպեն այն մէկ վայրկենին, որ է ըսել՝ ժամուան մը մէջ 62,400 օրինակ։ Այն հսկայաձև մեքենաները կը շարժին ուրիշ շոգեշարժ մեքենայէ մը, որ 30 ձիու ուժ ունի. 38 ոտք է երկայնութիւնն ին, 15 լայնութիւնն ին, և 16 բարձրութիւնն ին։ Այնանկ հրաշալի մեքենաներ են ասոնք, որ պատիւ կ'ընեն ամերիկեան Ճարտարութեան. և Լոնտրայի Դայմլ լրագիր

ը տեսնելով սասնց կատարելագործութիւնը, յանձնեց Հոյի շինելու նոյն մեքենայից նմանները, զանոնք իր ունեցած Լփլեկէյդի մեքենաներէն վեր սեպելով, որ ժամուան մը մէջ 9 հազար օրինակ միայն կը տպէն, և ինչուան հիմա աննման կը սեպուէին։

Հերոլդ տպարանը, որ Լիւ Լոնդրի նշանաւոր բաներէն մէկն է, 1,500-2,000 հոգի գործաւոր ունի. և լրագրին տարեկան զուտ եկամուտն է 70,000 տոլլար, որն որ կը շահուի գրեթէ միայն ծանուցումներէն, որովհետև ընկերագրութենէ եկած ստակը խմբագրութեան ու տպագրութեան ծախքը չհաներ։

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՔ

Քանի մը սեռական մարդկանց կարգէ դուրս զգացմունքները, մասնաւոր սովորութիւններն ու առանձին ախորժակները։

Լրևելի մարդիկ ընդհանրապէս այնպիսի կարգէ դուրս զգացմունքներ, իրենց սեփական սովորութիւններ ու առանձին մասնաւոր ախորժակներ ունին, որոնցմով ուրիշ անձինքներէ կը զանազանուին, և որով կը ցուցնեն իրենց սովորական կարգի մարդ չըլլալը։

Մանք եղած են՝ որոնց տարուոյն մէկ օրը սիրելի ու փափագելի կը սեպուէր. ինչպէս՝ Լաբոլէոնի՝ մարտ ամսուն 20ը։ Կարոլոս Ե կայսրը կը սիրէր Ս. Մատթէոսի տօնին օրը (24 փետրուարի). որովհետև նոյն օրը ծնած էր (1500ին), նոյն օրը կայսր ընտրուած էր, նոյն օրը թագ կապած էր, նոյն օրը հրաժարած էր կայսրութենէն, և նոյն օրը իր փերտինանտոս եղբայրը Պոհեմիոյ թագաւոր ընտրուած էր։ — Ֆրանկիսկոս Ա Պոլոնիոյ թագաւորն ալ յունուարի 1ը նշանաւոր կը համարէր. վասն զի նոյն օրը ծնած էր (1494ին), նոյն օրը իր հայրը մեռած, նոյն օրը թագաւորած, նոյն օրը իր աղջիկը կարգած, և նոյն օրը Կարոլոս Ե Մադրիզ մտած էր։

— Մեքստոս Ե սրբազան քահանայապետը ծնաւ չորեքշաբթի օր մը (13 դեկտ. 1521), իր կրօնաւորական ուխտը չորեքշաբթի օր ըրաւ, ծիրանաւորը եղաւ չորեքշաբթի օր, պապ ընտրուեցաւ չորեքշաբթի օր, և հետևեալ չորեքշաբթին իշխանութիւնը ձեռք առաւ։

Ս. Աուեստինոսի՝ Գոստոս կայսրը սաստիկ կը վախնար կայծակէ ու փայլակներէ, և կարծէր թէ վտանգէն կը խալասէր հետը միշտ ծովու հորթի կաշի մը տանելով, և փոթորկի ժամանակ գետնափոր ու կամարայարկ տեղուանք կը փախչէր պահուըտելու։ — Հերակլիոս կայսրը՝ 59 տարուան եղած միջոցը ծովը տեսնելով կարգէ դուրս սարսափ մը եկաւ վրան։ Լրբոր Ս. սորիք ըրած արշաւանքէն դարձաւ, Հերեա քաղաքին պալատը բնակեցաւ. և որպէս զի Կոստանդնուպոլիս կարենայ երթալ, Մոսփորի վրայ նաւակներով կամուրջ մը շինեցին, և երկու կողմէն տախտակներով ու ծառի ճիւղերով գոյեցին, անանկ որ առանց ծովը տեսնելու կրնար վրայէն անցուիլ։ Ս. շխատութիւնը արագութեամբ լմննալէն վերջը, կայսրը իբրև ցամաք երկրի վրայ ձիով կամուրջը անցաւ ու մայրաքաղաքն եկաւ։ — Ոբէզ տէ Մէկա սպանիացի հռչակաւոր բանաստեղծը չէր կրնար տեսնալ որ իր դիմացը քթախոտ քաշուի։ — Ուդովիկոս ԺԴ մոխրագոյն գլխարկներէն կը զզուէր։ — Լիգոլ բարոյախօսին պէս երկչոտ մարդ տեսնուած չէ. կը վախէր ասիկայ ճանապարհորդութենէ, ջրոյ վրայ նաւակով ժուռ գալէն, և իր կենաց վերջերը՝ դողալով կը պտըտէր ճամբաներուն մէջ, վախնալով որ չըլլայ թէ կղմինտր մը գլխուն վրայ իյնայ։ — Յավորիդի իտալացի բանաստեղծը, որ 1682ին մեռած է, չէր կրնար վարդի հոտ առնել։

Մանք մասնաւոր սեր մը ունեցած են կենդանեաց վրայ. ինչպէս Գոստոս կը սիրէր թութակ մը, Կոմմոտոս՝ կապիկ մը, Հելիոգաբալոս կայսրը՝ սաբեակ մը։ — Անորիոս՝ արևմտեան պե-